Նիկոլովան և Վանդովան ընդդեմ Բուլղարիայի

(գանգատ թիվ՝ 20688/04)

Չորրորդ Բաժանմունքի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ

Կոնվենցիայի 6-րդ հոդված

Կարգապահական վարույթ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

Հրապարակային դատաքննություն

Որոշակի ապացույցերն որպես «գաղտնի» որակելու հետևանքով հրապարակային դատաքննություն չի անցկացվել: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

Քրեական հետապնդումից հետո առաջին դիմումատուի նկատմամբ հարուցվել էր կարգապահական վարույթ և 2002 թվականին փետրվարին Ներքին գործերի նախարարի հրամանով նա ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: Նա դիմում էր ներկայացրել Գերագույն վարչական դատարան՝ ազատման հրամանը դատական կարգով վերանայելու պահանջով, ինչպես նաև փաստաբանին՝ երկրորդ դիմումատուին, հանձնարարել ներկայացնել իր շահերը: Ներքին գործերի նախարարությունը, հասցեագրելով դիմումատուի պաշտոնանկության վերաբերյալ փաստաթղթերը Գերագույն վարչական դատարանին, խնդրել էր, որ գործը քննվեր *դռնփակ* նիստում, քանի որ փաստաթղթերից մի քանիսը գաղտնի էին: Հիմնվելով այդ խնդրանքի վրա՝ Գերագույն վարչական դատարանը գործի փաստաթղթերը որակել էր որպես «գաղտնի»: 2003 թվականի հունիսին Գերագույն վարչական դատարանը դիմումատուին պաշտոնանկ անելու որոշումը թողել էր անփոփոխ, իսկ դիմումատուի բերած բողոքը՝ մերժել: Հաշվի առնելով այն, որ գործի նյութերը գաղտնի էին, առաջին դիմումատուն, նախևառաջ, չէր կարողացել ձեռք բերել վճիռների պատճենները, որոնք չէին հրապարակվել Գերագույն վարչական դատարանի կայքէջում: Նրան թույլատրել էին ծանոթանալ վճիռների տեքստին դատարանի գրասենյակում: Գործը վերադարձվել էր և

դադարել լինել գաղտնի 2009 թվականի հուլիսի 6-ին՝ օրենքով սահմանված հինգ տարին լրանալուց հետո:

Իրավունք՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

(ա) *Հրապարակային դատաքննության բացակայությունը*

Կիրառելիությունը

Հաշվի առնելով այն գործողությունների բնույթը, որոնք հիմք էին հանդիսացել դիմումատուին պաշտոնանկ անելու վարույթի հարուցման համար, այն է՝ կարգապահության խախտումը, դրանց դասակարգումը ներպետական օրենսդրությունում և այն պատիժը, որը դիմումատուն կարող էր կրել և որը կիրառվել էր նրա նկատմամբ, խնդրո առարկա վարույթը չի վերաբերել 6-րդ հոդվածի քրեական տիրույթի *[criminal limb]* շրջանակներում քննվող «քրեական մեղադրանքին»: 6-րդ հոդվածի 1-ին կետի քաղաքացիական տիրույթը *[civil limb]* կիրառելի էր քաղաքացիական իրավունքների վերաբերյալ ծագած իրական և կարևոր այն վեճերի նկատմամբ, որոնք առնվազն հիմնավոր պատճառներով, սահմանված էին ներպետական օրենսդրությամբ: Դատավարության արդյունքը պետք է ուղղակիորեն վճռորոշ լիներ խնդրո առարկա իրավունքի համար: Պետության և նրա քաղաքացիական ծառայողների միջև վեճերը սկզբունքորեն կարգավորվում են 6-րդ հոդվածի, բացառությամբ այն դեպքերի, երբ պետությունը ներպետական օրենսդրությամբ հստակորեն բացառում է դատարանի մատչելիությունը խնդրո առարկա պաշտոնի կամ անձնակազմի որոշ կատեգորիաների համար և այդ բացառումը բխում է պետական շահերից և ունի օբյեկտիվ հիմքեր: Սույն գործով չբացառելով դատարանի մատչելիությունը խնդրո առարկա պաշտոնի կամ անձնակազմի կատեգորիայի համար, ներպետական օրենսդրությունը հատուկ իրավադրույթ էր նախատեսել Ներքին գործերի նախարարության պաշտոնյային գործից ազատելու որոշման դատական վերանայման համար: Բացի այդ, դիմումատուի բերած բողոքը իրականում քննվել է Գերագույն վարչական դատարանի կողմից: Դրանից հետևում էր, որ 6-րդ հոդվածը կիրառելի էր իր քաղաքացիական տիրույթով հանդերձ:

Ըստ էության քննություն

Չնայած եղած առարկությունների, առաջին դիմումատուին առնչվող դատավարությունը իրականացվել է դռնփակ նիստում: Հրապարակային դատաքննության բացակայությունը դատարանի հատուկ այն որոշման արդյունք է, որն կայացվել է կողմերից մեկի՝ Ներքին գործերի նախարարության պահանջով, այն հիմքով, որ վերջինիս կողմից ներկայացված մի շարք փաստաթղթեր որակվել են և նշվել որպես «գաղտնի»: Իշխանությունները կարող են սկզբունքորեն նշել, որ փաստաթղթերը գաղտնի պահելու հարցում հետապնդում են իրավաչափ շահ: Այդուհանդերձ, որոշ գործերով դատական նիստերին հանրության ներկայությունը բացառելուց առաջ դատարանները պետք է հաշվի առնեն, թե արդյոք իրավունքի նման սահմանափակումն անհրաժեշտ է տվյալ հանգամանքներում՝ ելնելով հանրային շահից, և կիրառեն այն միջոցը, որն անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար:

Գերագույն վարչական դատարանն իր որոշման հիմքում դրել է ընդամենը այն փաստը, որ գործի նյութերը պարունակում էին գաղտնի փաստաթղթեր: Դատարանը հաշվի չի առել, թե արդյոք վիճարկվող փաստաթղթերը փոխկապակցված էին դատավարության խնդրո առարկայի հետ և, հետևաբար, անհրաժեշտ էին դրա համար, թե՝ ոչ: Դատարանը մտադիր չէր որոշակի միջոցներ ձեռնարկել հավասարակշռելու հրապարակային դատաքննության բացակայության հետևանքները, օրինակ՝ սահմանափակելով միայն որոշ փաստաթղթերի մատչելիությունը կամ ոչ բոլոր նիստերը դռնփակ կարգով անցկացնելով՝ այնքանով, որ դա անհրաժեշտ էր պահպանելու համար վիճարկվող փաստաթղթերի գաղտնիությունը: Ինչպես երևում է, այս իրավիճակը դռնփակ դատաքննության կանոնների մեխանիկական կիրառության հետևանք էր, որոնք ենթադրում էին, որ դռնփակ դատաքննություն պետք էր կիրառել այն դեպքում, երբ նույնիսկ մեկ փաստաթուղթ գաղտնի էր: Ներպետական օրենսդրության համաձայն՝ իրավասու դատարանը պարտավոր չէ մանրամասն և հատուկ հիմնավորումներ ներկայացնել այս կամ այն գործով հանրության ներկայությունը դատաքննությանը սահմանափակելու հարցում: Տվյալ պարագայում,

ակներև չէր, թե որքանով էր անհրաժեշտ հանրության ներկայությունը չթույլատրելը՝ վիճարկվող փաստաթղթերի գաղտիությունը պահպանելու համար:

Վերջապես, ինչ վերաբերում է դատավարության էությանը՝ գործոնի, որը որոշ գործերով կարող է արդարացնել դատական որևէ նիստի կամ հրապարակային դատաքննության բացակայությունը, սույն գործի քննության ընթացքում վիճարկվող հարցերը, այն է՝ կոռուպցիայի մեղադրանքների հետ կապված գործողությունների համար ոստիկանության պաշտոնյայի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը, այն աստիճան տեխնիկական չէին և չէին պահանջում հանրության վերահսկողության համար դռնբաց դատական նիստի անցկացում:

Եզրակացություն: Տեղի է ունեցել խախտում (միաձայն):

(բ) Վճիռների հրապարակային չլինելը

Հաշվի առնելով առաջին դիմումատուի գործի՝ որպես գաղտնի որակված լինելու փաստը, Գերագույն վարչական դատարանը բացի նրանից, որ գործը քննել էր դռնփակ նիստում, նաև վճիռները հրապարակել է առանց հանրության ներկա գտնվելու: Վճիռների մատչելիությունն ապահովված չի եղել ո՛չ դատարանի գրասենյակում և ո՛չ էլ դատարանի կայքէջում, և առաջին դիմումատուն հնարավորություն չի ունեցել ստանալ դրանց պատճենները: Գործի նյութերը չեն վերառակվել և դադարել գաղտնի լինել մինչև 2009 թվականի հուլիսը՝ դրանց համար օրենքով սահմանված հինգ տարին լրանալը, այսինքն՝ Գերագույն վարչական դատարանի վերջնական վճռի հրապարակումից հետո ավելի քան հինգ տարի անց: Վճռի հրապարակման սահմանափակումները գործի ամբողջ նյութերը մեխանիկորեն որպես գաղտնի դասակարգվելու հետևանք էին, առանց ներպետական դատարանների կողմից կոնկրետ գործով նման միջոցի անհրաժեշտությունը և համաչափությունը գնահատելու:

Եզրակացություն: Տեղի է ունեցել խախտում (միաձայն):